«Ալմաստ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Ռուբինյանց 28, հեռ.՝ (+37410) 24-35-20,
էլեկտրոնային հասցե՝ account@almastcompany.com

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
պարոն Արթուր Ջավադյանին

«12» ապրիլի 2018 թվական

Հարգելի պարոն Ջավադյան,

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 127-րդ հոդվածը, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի 50-րդ կետը, 24-րդ գլուխը, կից ներկայացնում ենք «Ալմաստ» ԲԲԸ-ի էական փաստերը և տեղեկությունները:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով,

«Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝
«Արինս Գրուպ» ՍՊԸ գլխավոր տնօրեն-վարչության նախագահ՝

Մհեր Գրիգորյան

«Ալմաստ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Ռուբինյանց 28, հեռ.՝ (+37410) 24-35-20,
էլեկտրոնային հասցե՝ account@almastcompany.com

Էական փաստեր և տեղեկություններ

«Ալմաստ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) տեղեկացնում է, որ Ընկերության տնօրենների խորհուրդը 11.04.2018 թվականին կայացած նիստին որոշում է կայացրել 27.04.2018 թվականին, ժ. 11:00 Ընկերության գտնվելու վայրում՝ ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում, գումարել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով հետևյալ օրակարգով՝ «Ալմաստ» ԲԲԸ-ի աուդիտն իրականացնող անձի հաստատումը:

Նույն նիստին որոշում է կայացվել 30.04.2018 թվականին, ժ. 12:00 Ընկերության գտնվելու վայրում՝ ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում, գումարել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով, որի օրակարգում հետևյալ հարցերն են.

1. «Ալմաստ» ԲԲԸ տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմի հաստատում, անդամների ընտրություն և հաստատում,
2. «Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ի զեկույց 2017 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ,
3. «Ալմաստ» ԲԲԸ 2017թ. գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացում,
4. «Ալմաստ» ԲԲԸ 2017թ. գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ անկախ աուդիրորոկան եզրակացության ներկայացում,
5. «Ալմաստ» ԲԲԸ 2017թ. գործունեության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների վճարման (չվճարման) մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում,
6. «Ալմաստ» ԲԲԸ տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում, դրա անդամների ընտրություն և հաստատում, վարձատրության պայմանների որոշում,
7. «Ալմաստ» ԲԲԸ վերստուգողի ընտրություն:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ և տարեկան ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 12.04.2018 թվականի դրությամբ:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Ալմաստ» ԲԲԸ բաժնետիրոջ կողմից տրված լիազորագրով:

Հարգանքով,
«Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝
«Արինս Գրուպ» ՍՊԸ գլխավոր տնօրեն-վարչության նախագահ Միհր Գրիգորյան